երկիրը անձամբ տեսած լինելու, կարելի չէ, մանաւանդ երբ ուշադրութեան չառնուին աղբիւրների մանրամասնութիւնները, ինչպէս եղել է այս դէպքում»:

Ահա ծանր ամբաստանութիւն, որից հետեւում է, թէ յօդուածի ճակատագրդ motto, Բելկի խօսքը, ուղղուած է մեր դէմ: Մեղապարտ ենք, ուրեմն, որ տեղագրութեան ծանօթ չենք, եւ աղբիւրների մանրամասնիքը անտես ենք արել: Ասել է, թէ այս երկու արատից զերծ է պ. Խաչատրեան, որ տեսել է երկիրը, ուսումնասիրել աշխարհագրական պայմանները, այլ եւ լիովին օգտուէտել է պատմական աղբիւրները իրենց մանրամասնութեամբ:

Տեսնենք, որքան արդարացի են այս յայտարարութիւնները:

* * *

Պրոկոպ յոյն պատմիչը յիշում է երկու աշխարհագրական կէտ, Bolon, որ միշտ կոչում է Phrourion «բերդ», եւ Pharangion, որ երբեք չի կոչում բերդ: Առաջնի, այսինքն՝ Բոլոնի համար ասում է, որ գտնւում է Թէոդոսուպոլսի (որ է Կարին=Էրզրում) սահմաններին մօտիկ: Իսկ Փարանգիոն այն տեղն է, ուր կար ոսկեհանք, եւ շատ մօտ էր Վոհ կամ Ճորոխ գետի ակունքին:

Բոլոն բերդը ծանօթ է հայ մատենագրութեան: Սա այն բերդն է, որ Փարպեցին կոչում է Բողբերդ եւ գնում է Բասենում: Բասենը Կարինի թիկունքն է, եւ ուրեմն Պրոկոպ իրաւունք ունէր ասելու, որ Բոլոն բերդը Կարինի սահմաններին մօտ էր:

Փարանգիոնը անծանօթ է մեր մատենագրութեան, բայց Պրոկոպի այն ցուցումից, որ գտնւում էր Ճորոխի ակնքում, եւ որ յայտնի էր ոսկեհանքով, պարզ հետեւում է, որ խօսքը Սպերի շրջակայքում գտնուած ոսկեհանքի մասին է, որովհետեւ Ճորոխի ակունքը իրօք գտնւում է Սպերի առջեւ բարձրացող լեռների մէջ: Նոյն տեղն է Փարանգիոնը, ինչ որ Սարաբոնի Կարալլա:

Լոյսի պէս պարզ է: Եւ այս ճշմարտութեան դէմ է ելնում պ. Խաչատրեան, առարկում է, հակասութիւններ է գտնում մեր խօսքերի մէջ, առանց նկատելու, որ հակասութեան աղբիւրն ինքն է, իր հիմնովին սխալ հասկացողութիւնը, որով պատմիչի յիշած երկու տեղերը ձուլում է, կարծելով որ նրանք գտնւում են միեւնոյն տեղ իրար կից: Այս պատճառով էլ Փարանդիոնին է վերագրում, ինչ որ պատմիչն ասում է Բոլոնի մասին, եւ ընդհակառակը Բոլոնին է տալիս, ինչ որ վերաբերում է Փարանդիոնին:

Հիմնական սխալ, որ փոչի է դարձնում ոչ միայն նրա առարկութիւնները, այլ եւ ամբողջ ուսումնասիրութիւնը:

«Պրոկոպ Բող եւ Փարանդիոն միշտ «անբաժան» է յիշում,— գրում է պ. Խաչատրեան,— եւ որոշակի ասում թէ ոսկեհանքը գտնւում էր նրանց մօտ. Իսկ Ադոնց ոսկեհանքը գտնում է Սպերի մօտ, ուստի չէր կարող Բասենի սահմանների վրայ գտնուել»:

Ո՛չ, պ. Խաչատրեան, Պրոկոպ այդ չէ ասում, այլ այն, որ ոսկեհանքը գտնւում է Փարանդիոն, իսկ Բող՝ Բասենում:

Տարբերութիւնը մեծ է:

Այս հանգամանքը զանց անելով պ. Խաչատրեան գտնում է, որ մեր տեղագրական բացատրութիւնը չէ նպաստում խնդրի լուծման: Երեսը դարձնում է մեզնից եւ առաջարկում դիմել Պրոկոպին, որ նրա տուած մանրամասնութիւնների միջոցով կարողանայ ճշդել ոսկեհանքի տեղը, քանի որ մեզ յանդիմանեց որ ուշադրութեան չենք առել մանրամասնութիւնները:

Արդոյ բանասէրը բերում է միառմի Պրոկոպի տեղեկութիւնները: Հետեւինք նրան: Գեղեցիկ առիթ է ծանօթանալու նաեւ նրա բանասիրական կարողութիւնների հետ:

Պրոկոպ ասում է ըստ Խաչատրեանի՝

1. Հոռոմները «պահանջեցին պարսկական մի քանի բերդեր Պարսկահայքում, որոնք են Բոլոնի բերդը եւ Փառանդիոն անուանուած բերդը որն այն տեղում է(!), ուր պարսիկները ոսկի են հանում, որը տանում են արքային»:

2. Իսահակ Կամսարականը «Հոռոմներին յանձնեց Բոլոն բերդը, որը շատ մօտ էր գտնւում Թէոդոսիուպոլսի սահմանին»:

3. Պարսից թագաւորը «պահանջում է որ հոռոմները պէտք է վերադարձնեն Փառանդիոն եւ Բոլոն բերդերը(!)»: